



Արմեն Հակոբի Վարժապետյանը ծնվել է Երևան քաղաքում 1974 թվականի ապրիլի 4-ին: 1991-1995-ը սովորել է Երևանի բանկային տնտեսագիտական ինստիտուտի Ֆինանսներ և վարկ ֆակուլտետում:

Մասնակցել է աուդիտի, վերահսկողության, ռիսկերի վերլուծության և մի շարք այլ դասընթացների Ավստրիայում, Հունգարիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Լիբանանում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում և այլ երկրներում 2018-ին Արմեն Վարժապետյանը Գերմանական IBITGQ-ի կազմակերպության կողմից ստացել է ISO 27001 Lead Auditor վկայական:

1995-1999 թվականն աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. վերահսկողության, կարգավորման և արտոնագրման գլխավոր վարչության բանկային վերահսկողության վարչությունում որպես պայմանագրային մասնագետ (21.06.1995-02.10.1995), 02.10.1995-ից նշանակվել է նույն վարչությունում որպես մասնագետ, 01.08.1996թ.-ից նշանակվել է ավագ մասնագետ, իսկ 03.11.1997-ից եղել է առաջատար մասնագետ:

07.05.1999-ից Արմեն Վարժապետյանն աշխատել է «Միավորված բանկ» ԲԲԸ-ում որպես բանկի ներքին վերահսկողության վարչության պետ:

Շարունակելով իր հարուստ աշխատանքային փորձը բանկային համակարգում, 02.04.2001-ին աշխատանքի է ընդունվել «Հայներարտբանկ» ՓԲԸ-ում՝ որպես Հաճախորդների սպասարկման ղեկարտամենտի ավագ մենեջեր:

01.08.2001թ. նշանակվել է նույն ղեկարտամենտի Գործառնական վարչության պետ:

20.01.2003թ. ընդունվել է աշխատանքի «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՆԲԱՆԿ» կոոպերատիվ բանկում, ներկայիս « Ակբա բանկ»ԲԲԸ, որպես ներքին աուդիտի բաժնի մասնագետ:



24.05.2004 թ. նշանակվել է ներքին վերստուգող խմբի ղեկավար:
2006թ.-ի հուլիսի 3-ից առ այսօր Արմեն Վարժապետյանը «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ»
կոոպերատիվ բանկում (09.09.2006թ.-ից «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ)
գրաղեցնում է Ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնը:

2017թ. նոյեմբերից հանդիսանում է Ներքին Աուդիտորների Ինստիտուտի խորհրդի անդամ:

Ամուսնացած է, ունի որդի և դուստր: